



ՕՐԱԳԻՒ

ՅԵՐԱՅԻՆԻ, ՅԵՐԵՎԱՆԻ, ՏԵՂԵԿԱՆԻ

ԵՒ

ԲԵԼԵԿԻ ԳԻՏԵԼԵՐԸ

Ե · ՏԱՐԻ, ԹԻՒ 22 ·

1847

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15 ·

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ժաղովրդեան համ աղջի ճը խեղճութիւններուն դէղը դաստիարակութիւնն է :

Կամ մը կամ ժողովուրդ մը Երբ աւրուած կը սեպուի, կամ ի՞նչ վիշակի մէջ ըլլայ նէ՝ իրաւցընէ խեղճ կ'ըսուի: — Մոր նման առաջարկութիւնը կ'ընէ հիմակուան իտալացի մատենագրաց մէկն ու պատասխանը ինքը կուտայ: — Մն ատենը աւրուած ու ապականուած է, կ'ըսէ, ժողովուրդը, երբոր ընտանեկան կենաց պարտքերը ոտքի տակ կ'երթան. Երբոր հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը անպտուղ բառեր ու նախատական մեծաբանութիւններ կ'ըլլան. Երբոր վատ խոհեմութեան ցըցուցած օգուտները աւելի վեր կը դրուին քան թէ հասարակաց օգուտները. Երբոր հաւատքն ու աստուածպաշտութիւնը չսեպուիր եղբայրական ազգային կապ, գործունեայ սիրոյ յորդոր, գեղեցիկ յոյսերու գրաւական, մեծամեծ մարդկանց դաստիարակ, հապակամ ռամիկներու սանձ, կամ տկարամիտներու զբոսանք, և կամ

շատ շատ՝ առանձնական դժբաղդութեանց միմիթարութիւն: Մն ատենը ուր կը մնայ պարտք ու իրաւունք ըսածդ, ուր կը մնայ ան ուրախութիւնն ու ոյժը որ գովելի միաբանասիրութեան պտուղներն են. այնպիսի ժողովուրդը ի՞նչ բան է, բայց եթէ խումբ մը անքան կենդանեաց՝ որ քիչ շատ կը հնազանդին հովուի մը ձայնին կամ գաւազանին, ու ամէն մէկը իր առջեկի խոտը արծիւկընայի. կը տեսնէ իր քովինին խուզուիլը, ծախուիլը, մորթուիլը, ու պաղպաղ կեցած կը նայի: Մյապիսի ժողովուրդ կը գտնուի արդեօք մեր օրերը լյուրոպայի մէջ. ես չեմ գիտեր (կ'ըսէ նոյն իմաստունը). բայց թէ որ կը գտնուի նէ, կրնանք ըսել առանց ամենեին տարակուսելու, որ այնպիսի ժողովրդեան մէջ ձմարիտ բարեկամութիւնը, բարերարութիւնը, հաւատարմութիւնը մէյմէկ պարապիսուքեր են. ազնուականն ու հարուստը,

Եկեղեցականն ու գիտնականը, ժողովրդականն ու իշխանաւորը, տէրն ու ծառան, ծերն ու երիտասարդը, գեղացին ու քաղաքացին, դրացին ու մերձաւորը մէկմէկու միս կ'ուտեն, մէկզմէկ կը նախատեն, մէկմէկու որոգայթ կը լարեն, մէկզմէկ սուտ սիրով կը խաբիշը են, որ ուրիշ ամէն որոգայթներէն ալ աւելի անողորմէ . և թէ որ այնպիսի ժողովրդեան մէջ աս բաներս չըլլան նէ՝ հրաշք է : Իարեսրտութիւնը թմրած կը քննանայ, կամ չորս պատի մէջ փակուած կուլայ կամ աղօթքի հետ կ'ըլլայ . բայց այնպիսի ժողովրդեան մէջ բարեսըրտութիւն, սէր, կարողութիւն ըսածներդ մասնաւոր մարդու կամ տան յատկութիւններ են . զուարթութիւնն ու համարձակութիւնը կը կորսուին . զգայուն սիրտ ունեցողները ամենէն առաջ կը զցուին այնպիսի ընկերութենէ, և խղճմտանքով գիտնալով թէ ուրիշներն ալ իրենց միտքը կը հասկընան՝ ուրիշի վրայ վստահութիւննին կը կորսընցընեն : Ի սանկով մարդ մարդէ բաժնուած, ու ինքիրեն մնացած, կը տեսնէ իր անկարողութիւնը, կը լքանի ու կը յուսահատի :

Ի յապիսի խեղջ վիճակին ի՞նչ գեղ կրնայ ըլլալ : Ի՞նչ գեղ ալ ըսես՝ դժուար է : — Ո՞եկ հատիկ գեղը ասէ . լաւ դաստիարակութեամբ ժողովրդեան տղաքը կը թել, և առաքինութիւններն ու մէրը մէկտեղ հիւսելով կապ մը շինել ու անով կապել ընտանիքը, հայրենիքը և բոլոր մարդիկը :

Ժողովրդեան բարքն ու կարծիքները մեծ գետի մը կը նմանին . կրնաս անոր արագութիւնը փոխել կամ մէկդի ժարձրնել, բայց ընթացքը ոչ երբէք կրնաս արդիւլ:

ՊՈՒԱՍԹ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ

|| արդ և || ոխակ :

|| ԱՐԴԸ և սոխակը արևելեան երգոց մէջ ի՞նչ տեղոր ունին՝ ոչ ծանուցանելու և ոչ ծանօթ ըլլալը իմացընելու կարօտ է . միայն հոս դրուած երգը այն սովորական երգերուն ոձէն շատ տարբեր ըլլալով՝ արժանի և շատ ալ արժանի կը սեպենք հրատարակելու . վասն զի ասիկայ մէկ բնական՝ հայկական ու նարեկեան վարպետ զուրցուածք մը ունի՝ խաղուն ու վառվըռուն, զուարթ ու զգայուն բանաստեղծութիւն մը . միով բանիւ, մեզի նշանաւոր գրուածք մը կ'երևնայ, Ճարտար գրչէ և սրտէ եւ լած . կարդա ու դատէ :

ՃԱԼ ԺԵԼ ՍՈԿԻԷ ՎԱՐԴԻ ԹԵՐԹԵՐՆ .

Որպէս և ասեն նախնի ծերերն

Ահա մերձեցաւ գարնան ջերերն

Անուշ օրերն .

Գեղգեղեսւ գոչէ կանչէ հառաչէ

Պիւպիւն երամով երամովիւրով :

Չալչալ թէներն սովով ի սէր տարածեալ

Ուլբով և կոծ ովչեղել շատացեալ,

Ի վերայ վարդին կարօտահարեալ

Եւ սիրով վասեալ:

Գեղգեղեալ և այն ծալ ծալ թէրթերուն վարդին թէրաբաց

Հեղու զարտասուս նման աղբերաց ,

Ճնշել և հանգչել նա ըստ օրինաց

Երբէք ոչ գիտաց :

Գեղգեղեալ և այն Քեւքիւքալով և սսառստելով

Ըուրջ ըզլարդենեք շրջե ողբալով ,

Ի ծագել լուսանոյն երգս յօրինելով

Քաջ յարմարելով :

Գեղգեղեալ և այն Չելչիլ երամոց սոխակաց հաւուց

Եհաս հովանի ՚ի յոստոց թաւուց .

Դաշտք նմանեցան բարեբեր նաւուց

Ի թռման հաւուց :

Գեղգեղեալ և այն Չելչիլ ձայներով համեղ տաղերով

Գինին սառուցէք փայլուն պաղերով ,

Վարդըն գնչեցէք թօփ թօփ շաղերով

Պուտ պուտ ցողերով :

Գեղգեղեալ և այն Գիլ գիլ վայրերն և լիլ լիլ տեղիք ,

Դաշտք և առապարք բլուրք և հովիտք ,

Զարդարեալ ցնծան և համայն լերինք

Ներքինք և վերինք :

Գեղգեղեալ և այն Քու քու վարդեալ և այն Դուլ քու վարդենեաց ՚ի յոստոց ծայրէ

Ծուլ ծուլ թռչուի ՚ի վայր ՚ի վայրէ .

Քու քու արտասուզք ըզսիրան իւր այրէ .

Ի փշուտ վայրէ :

Գեղգեղեալ և այն :